

## **Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում**

### **Առարկա Քաղաքատնտեսություն**

#### **Անոտացիա**

*Համառոտ նկարագրություն.* «Քաղաքատնտեսություն» դասընթացը նվիրված է հիմնական տեսական և հետխորհրդային տարածքի, ինչպես նաև նախկին սոցիալիստական ճամբարի երկրների՝ վարչահրամայական տնտեսության համակարգից շուկայականի անցման հետ կապված գործնական հարցերին:

Հատուկ ուշադրություն կդարձվի Հայաստանի Հանրապետությունում անցումային գործընթացներին տնտեսագիտության և քաղաքականության բնագավառում: Այս դասընթացի շրջանակներում ուսանողները կուսումնասիրեն յուրաքանչյուր առանձին երկրում անցումային գործընթացների առանձնահատկություններին վերաբերող գործնական հարցեր, կդիտարկվեն պլանային տնտեսությունից շուկայական տնտեսության անցման մոդելներ: Ուսումնասիրվելու են անցումային գործընթացում պետության դրամավարկային, հարկաբյուջետային, արտաքին տնտեսական, հակամենաշնորհային և սոցիալական քաղաքականությունների խնդիրները, գնահատվելու են բարեփոխումների դրական և բացասական հետևանքները: Մանրամասն կդիտարկվեն Հայաստանի Հանրապետությունում անցումային շրջանի պետական քաղաքականության հարցերը:

«Քաղաքատնտեսություն» դասընթացը ուղղված է տարբեր մասնագիտությունների ուսանողների գործնական և վերլուծականի զարգացմանը, բակալավրերի և ասպիրանտների տարբեր մասնագիտությունների համար: Այս դասընթացը օգնում է հաշվի առնել քաղաքական գործոնները՝ բարդ տնտեսական գործընթացները վերլուծելիս: Մյուս կողմից, քաղաքականության և տնտեսագիտության արդի հիմնախնդիրների շուրջ քննարկումներն օգնում են ուսանողներին պատրաստվել գործնական գործունեության, օգնում են մասնակիցներին բիզնես և տնտեսական ռազմավարություններ մշակելիս կողմնորոշվել երկկողմ և բազմակողմ տնտեսական հարաբերություններում, հաշվի առնել քաղաքական միջավայրի գործոնը և պետությունների ու տարբեր շուկաների արտաքին քաղաքական բնութագրերը: